ARMENTEL

ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ
ARMENIA TELEPHONE COMPANY

# ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելը» Հայաստանում գործող հեռահաղորդակցության պետական օպերատորն է, որն ունի ավելի քան 800.000 բաժանորդ եւ գործունեություն է ծավալում հանրապետության ինչպես շարժական, այնպես էլ ֆիքսված հեռախոսային ցանցերի բնագավառում: «Արմենտելը» տարեկան միլիոնավոր դոլարների ներդրումներ է կատարում հանրապետության ֆիքսված հեռախոսակապի ենթակառուցվածքների թվայնացման եւ շարժական կապի ծառայությունների ընդլայնման եւ նոր տեխնոլոգիաների ներմուծման ուղղությամբ: Ներկայումս «Արմենտելը» գտնվում է մատուցվող ծառայությունների ընդլայնման փուլում, եւ իրականացնում է իր աշխատուժի եւ գործընթացների հիմնական վերակազմավորում՝ առաջարկելով նոր հետաքրքիր աշխատանք դինամիկ եւ եռանդուն անձանց, ովքեր փնտրում են հետաքրքիր եւ խոստումնալից աշխատանքային միջավայր:

| Պաշտոնի անվանումը՝ ինֆորմացիոն տեխնոլոգիայի գլխավոր տնօրինության աջակցման ճարտարագետ | Զեկուցում է ինֆորմացիոն տեխնոլոգիայի գլխավոր տնօրենին |
|---|---|

Համառոտ նկարագիրը՝
- Ընկերության ԻՏ ենթակառուցվածքի, ներառյալ համակարգիչներ, տպող, պատճենահանող սարքեր եւ ֆաքսեր, խնդիրների լուծում:
- Օգտագործողների աջակցում:
- Հաճախորդների խորհրդատվություն եւ աջակցում /հեռահար կամ տեղում/:

**Պահանջները՝**

- բարձրագույն կրթություն,
- համակարգչային կամ կից գիտությունների բակալավրի աստիճան,
- որեւէ ապարատային ապահովման (hardware), անխափանության իմացություն, BIOS-ի POST կոդերի, կոշտ սկավառակի տվյալների վերականգնման, MBR վերականգնման գիտելիքներ, unformat, unerase, տվյալների արտակարգ վերականգնման համակարգերի իմացություն,
- Windows-ի ցանկացած ծառայության տեղադրման ունակություն: Վիրուսների վնասազերծում : Windows ռեգիստրների, հիմնական կոդերի իմացություն,
- ցանցեր. տեղային եւ գլոբալ (LAN/WAN) ցանցերի իմացություն, պրոտոկոլների, ռաութինգի, NAT տեխնոլոգիաների իմացություն, net mask ցանցային հասցեների, հեռահաղորդակցման հասցեներ, ռեալ եւ ֆիկտիվ հասցեների սկզբունքների իմացություն,
- ինստալյացիա, տեղադրում : Կառավարման հիմունքներ, օգտագործողների իրավունքների սահմանափակման քաղաքականություն եւ այլն : Հեռահար դիագնոստիկա: Օպերացիոն համակարգի եւ windows ծրագրերի կոնֆիգուրացում եւ հարմարեցում,
- կիրառական ծրագրեր. MS Office ծրագրերի լավ իմացություն, տվյալների հենքերի հիմնական գիտելիքներ,
- անգլերենի լավ իմացություն, հատկապես տեխնիկական գրագրություն եւ այս գիտելիքները զարգացնելու հնարավորություն,
- խնդիրների լուծման լավ ունակություն, հաղորդակցման եւ հաշվետվության ունակություն հայերեն եւ անգլերեն լեզուներով, խմբի լավ անդամ լինելու հնարավորություն:

**Առավելությունները՝**

- բարձր մրցակցային աշխատավարձ,
- աշխատանքային գործունեության ծավալման զարգացման մեծ հնարավորություններ միջազգային ասպարեզում,
- վերապատրաստման գերազանց հնարավորություններ բազմաբնույթ բնագավառներում:

Դիմումը ներկայացնել՝ «Արմենտել» ՓԲԸ, կադրերի վարչություն,
Երեւան 375014, Ահարոնյան 2 կամ էլեկտրոնային՝ ***www.armentel.com*** հասցեով

Ավարտման ժամկետը՝ 2005թ. հունիսի 21-ը

---

ΑΣΟΕΕ 1920

*Իսկ դուք գիտե՞ք, որ MBA-ն արդեն հասանելի է Ձեզ համար:*

OTE International

## Միջազգային կրթաթոշակ Աթենքի տնտեսագիտության եւ բիզնեսի Համալսարանում (AUEB) Առաջարկում են OTE International-ը եւ «Արմենտել»-ը

### Հունաստանի բիզնեսի եւ տնտեսագիտության առաջատար համալսարանը առաջարկում է խոստումնալից միջազգային MBA ծրագիր

OTE International-ը, հանդիսանալով Հունական հեռահաղորդակցության կազմակերպության (OTE S.A.) դուստր ձեռնարկություն, «Արմենտել» ընկերության հետ մեկտեղ, շնորհում է սահմանափակ քանակի կրթաթոշակներ Հայաստանի լավագույն ուսանողներին, մասնակցելու MBA միջազգային ծրագրի դասընթացին 2005-2006 ուսումնական տարվա համար: Միջազգային MBA ծրագրի հետ կապված բոլոր ծախսերը ամբողջությամբ կհոգան OTE International-ը եւ «Արմենտել» ընկերությունը, առաջարկելով կրթաթոշակներ:

Այս ժամանակակից MBA ծրագիրը մագիստրատուրայի փայլուն եւ խոստումնալից ուսանողների եւ տեխնիկական կամ տնտեսագիտական որակավորմամբ երիտասարդ մասնագետների համար է, ովքեր ունեն ակադեմիական երաշխավորագրեր, ղեկավարելու ունակություն եւ փնտրում են հնարավորություններ ինքնազարգացման եւ միջազգային մենեջմենթի ասպարեզում աշխատանքային կարիերա ծավալելու համար:

AUEB-ում ծրագրի բարեհաջող ավարտից հետո MBA-ի շրջանավարտները կարող են իրենց հետագա աշխատանքային կարիերայի զարգացումը իրականացնել «Արմենտել»-ում, ինչպես նաեւ հայաստանյան ցանկացած ընկերությունում կամ կազմակերպությունում:

Համապատասխան դիմորդները պետք է ունենան ճանաչված բարձրագույն ուսումնական հաստատության բակալավրի աստիճան, անգլերեն լեզվի գերազանց իմացություն եւ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ: Դիմորդներից պահանջվում է ներկայացնել դիմումի լրացված ձեւը, առնվազն 2 երաշխավորագիր-նամակ եւ ռեզյումե:

**Դիմումի ամբողջական փաթեթը պետք է ուղարկել**
**Միջազգային MBA ծրագիր**
**Աթենքի տնտեսագիտության եւ բիզնեսի համալսարան**
47A Էվելպիդոն & 33 Լեֆկադոս, GR-113 62 Աթենք, Հունաստան
Հեռ. +30.210.8203660, Ֆաքս. +30.210.8828078
Էլ. փոստ: i-mba@aueb.gr, ինտերնետային էջ: www.i-mba.aueb.gr
**Դիմումի ձեւը կարող եք գտնել ինտերնետային կայքում**

OTE

www.i-mba.aueb.gr

ARMENTEL

**Դիմումի ներկայացման ժամկետը մինչեւ հունիսի 20-ը**



«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 9. 06. 2005 Գինը՝ 100 դրամ